ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1317-10.04.2026-ՏՏԳՇ-011/0) **ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ** (Կ-1317'-10.04.2026-ՏՏԳՇ-011/0)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ				
1.	Կառավարություն	Հոդված 4,	- Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետին հաջորդում է «թ» ենթակետը, ուստի առաջարկում ենք ապահովել Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետի ենթակետերի համարակալման հաջորդականությունը: - Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետում «5.1-րդ» գրելաձեւը փոխարինել «5.1-ին» գրելաձեւով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձեւը:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն	Հոդված 7	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին հաջորդում է 3-րդ կետը, ուստի առաջարկում ենք ապահովել Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի կետերի համարակալման հաջորդականությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Հոդված 9	- Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «իրավական ակտերն» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը: - Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում նշված «իրավական ակտերով» բառերից առաջ նույնպես առաջարկում ենք լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ				
4.	Կառավարություն	Վերնագիր	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ	Ընդունվել է	Ընդունվել է

			ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը»		
5.	Կառավարություն	Հոդված 1	Առաջարկվող կարգավորումը նախատեսել «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածով, մասնավորապես հոդվածը լրացնելով հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի իրականացման համար պետական տուրքի վճարումից ազատվում է նախաձեռնողը՝ Բ կատեգորիայի մեջ ներառվող անտառապատման գործունեության փաստաթղթերի փորձաքննության համար:»	Ընդունվել է	Ընդունվել է